ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 27—28-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Բ. Ն. Մարկիսովը, Ֆ. Տ. Սարոսյանը, Գ. Ն. Անդրեևը, Կ. Լ. Դալլաքյանը, Լ. Ն. Ներսիսյանը, Հ. Թ. Աստծատրյանը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, պետպլանի նախագահ Հ. Ս. Սաղոյանը, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Յա. Ի. Խաչիկյանը։

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա նշեց, որ հաշվետու տարում հանրապետության գիտական գլխավոր օջախի գործունեությունը նպատակամղված է եղել գիտական հետազոտությունների հետագա զարգացմանը և այդ հետազոտությունների նյութատեխնիկական բազայի ընդլայնմանը։ Ակադեմիայի կազմում ստեղծվել են գիտական նոր հիմնարկներ, լաբորատորիաներ, կոնստրուկտորական բյուրոներ, որոնք կոչված են ամրապնդելու գիտության կապն արտադրության հետ, արագացնելու գիտական մշակումների և հանձնարարականների ներդրումը ժողովրդական տնտեսության մեջ։ Կանգ առնելով ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ստորաբաժանումների գործունեության վրա, Վ. Համբարձումյանն ընդգծեց, որ այն կոլեկտիվներում, ուր կատարվում է նպատակասլաց որոնում, կոորդինացվում է հետևողական աշխատանքը և ուշադրություն է դարձվում կադրերի պատրաստման, առկա են խոշոր նվաճումներ։

Ընթացիկ տարին մեզ համար նշանակալից է, վերջում ասաց Վ. Հ. Համբարձումյանը, դա Վ. Ի. Լենինի ծննդյան 110-րդ տարեդարձի, Սովետական Հայաստանի 60-ամյակի տարին է, որը հանրապետության գիտնականները նշանավորում են նոր նվաճումներով։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1979 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Ա. Գալոյանը։ 1979 թ. ՀՍՍՀ ԳԱ գիտական և գիտակազմակերպչական գործունեությունը, մատնանշեց նա, ընթացել է երկրի ժողովրդական տնտեսության զարգացման 10-րդ հնգամյակի չորրորդ տարվա պլանին համապատասխան։ Ղեկավարվելով կուսակցության, կառավարության ու ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության որոշումներով, հանրապետության գիտությունների ակադեմիայի հիմնարկները հաշվետու տարում նշանակալի աշխատանք կատարեցին հետազոտությունների արդյունավետության ու որակի հետագա բարձրացման ուղղությամբ։ ՀՍՍՀ ԳԱ ինստիտուտներն այլ գիտական հիմնարկների հետ մեկտեղ համախմբեցին իրենց ջանքերը՝ ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերի համար առաջնահերթ նշանակություն ունեցող սկզբունքորեն նոր գիտական գաղափարների և տեխնիկական լուծումների մշակման ուղղությամբ։ 1979 թ. հանրապետության գիտական հիմնարկներում աշխատանք է կատարվել 472 թեմաների գծով, այդ թվում բնական գիտությունների բնագավառում՝ 306 թեմաների, հասարակական գիտությունների բնագավառում՝ 166 թեմաների գծով։

Անդրադառնալով գիտությունների ակադեմիայի բաժանմունքների ու նախագահության գործունեությանը, Գ. Ա. Գալոյանը նշեց, որ հատուկ ուշադրություն է նվիրվել առավել հրատապ պրոբլեմների լուծման նպատակով գիտահետազոտական աշխատանքների կոորդինացմանն ու կադրերի պատրաստմանը։ Զեկուցողն այնուհետև նշեց, որ ակադեմիայի ստորաբաժանումներն ընդհանուր առմամբ ապահովել են տարեկան պլանի կատարումը ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական, քիմիական, երկրաբանական, կենսաբանական և հասարակական գիտությունների բոլոր ճյուղերի գծով։

Վերջում զեկուցողը կանգ առավ ՀՍՍՀ ԳԱ միջազգային կապերի, գիտական խորհուրդների գործունեության, գյուտարարական, պատենտա-լիցենզիոն աշխատանքի, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման որոշ հարցերի վրա։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի գործունեության հիմնական արդյունքների վերաբերյալ զեկուցման քննարկմանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Վ. Հ. Ղազարյանը և Մ. Դ. Մանվելյանը, որոնք մասնավորապես խոսեցին նաև բարձրորակ գիտական կադրերի պատրաստման, հանրապետության բնության ու ընդերքի պաշտպանության անհրաժեշտության մասին։

Ժողովը որոշ փոփոխություններ մտցրեց ՀՍՍՀ ԳԱ գիտահետազոտական ինստիտուտների կանոնադրության մեջ։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհա-

նուր ժողովում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պարգևների հանձնման ամենամյա հանդիսավոր արարողություն։

Գիտական բեղմնավոր գործունեության համար «Մեծարման գրի» արժանացան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Գ. Ներսիսյանը, Բ. Ն. Առաքելյանը և Ա. Թ. Բարայանը։ Գիտության զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար «Վաստակագրով» պարգևատրվեցին ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Է. Բ. Աղայանը, Հ. Գ. Բակլավաջյանը, Ա. Հ. Գաբրիելյանը, Ս. Գ. Մազոյանը, Գ. Խ. Սարգսյանը, Մ. Լ. Տեր-Միքայելյանը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ն. Ս. Ղալաչյանը և պատմական գիտությունների դոկտոր Վ. Բ. Բարխուդարյանը։ 1979 թ. գիտահետազոտական հաջող գործունեության համար 32 գիտնականներ արժանացան «Գովեստագրի»։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Ս. Գ. Մազոյանն ու Է. Գ. Ավիրիկյանը։

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 24-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի գիտական հիմնարկների 1979 թ. գործունեության մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը։ Նա ասաց, որ հաշվետու տարում բաժանմունքի կոլեկտիվն առաջնորդվելով հասարակական գիտությունների զարգացման վերաբերյալ ՍՄԿԿ XXV համագումարի որոշումներով և ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի 1979 թ. ապրիլի 27-ի «Գաղափարախոսական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքի հետագա բարելավման մասին», ինչպես նաև Վ. Ի. Լենինի ծննդյան 110-րդ տարեդարձի մասին որոշումներով, շարունակել է աշխատանքները գիտական պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ։ Բաժանմունքի գիտական հիմնարկները 31 պրոբլեմների գծով մշակել են 117 թեմա և ավարտել 26-ը։ Այնուհետև ակադ. Գ. Բ. Ղարիբջանյանն անդրադարձավ բաժանմունքի գիտական հիմնարկների, բաժանմունքի բյուրոյի և անդամների գործունեությանը, նշելով ձեռք բերված հաջողություններն ու եղած թերությունները։

Զեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. Պ. Ակաբյանը, Ա. Ա. Առաքելյանը, Ս. Տ. Երեմյանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Խ. Սարգսյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը և խոսեցին բաժանմունքի հիմնարկների գիտական կապերի, մատենագիտական աշխատությունների հրատարակության, ժողովուրդների բարեկամության թանգարանի բացման և աշխատանքային կարգապահության բարձրացման անհրաժեշտության մասին։

Ժողովում զեկուցումներով հանդես եկան նաև ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը և պատմական գիտությունների դոկտոր Խ. Հ. Բարսեղյանը։ Նրանցից առաջինը խոսեց հնագիտության ինստիտուտի կողմից 1979 թ. հանրապետության տարածքում կատարված պեղումների հիմնական արդյունքների մասին, իսկ երկրորդը պատմեց, թե ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտորն ինչպես է դիմավորում Վ. Ի. Լենինի ծննդյան 110-ամյակը։

ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 25-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի գիտական հիմնարկների 1979 թ. գործունեության մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնակատար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Ա. Բրուտյանը։ Նա ասաց, որ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքը և բոլոր ինստիտուտներն իրենց աշխատանքները կազմակերպել են ՍՄԿԿ XXV համագումարի որոշումները կենսագործելու, 10-րդ հնգամյակի առաջադրանքները կատարելու ոգով։ Հաշվետու տարում բաժանմունքը հիմնարար տեղ է հատկացրել «Գաղափարախոսական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքների հետագա բարելավման մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման իրագործմանը։ Բաժանմունքի գիտական հիմնարկները 28 պրոբլեմների գծով մշակել են 48 թեմա, որից ավարտվել է պլանով նախատեսված 11 թեմա։ Զեկուցողն այնուհետև անդ-

բաղարձավ բաժանմունքի գիտական հիմնարկների, բաժանմունքի բյուրոյի և անդամների 1979 թ. գործունեությանը, նշելով ձեռք բերված հաջողություններն ու տեղ գտած թերությունները։

Հաշվետու զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ է. Մ. Ջրբաշյանը և Ռ. Վ. Զարյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը և խոսեցին աշխատանքային կարգապահության բարձրացման անհրաժեշտության, գիտական արտադրանքի հրապարակման հետ կապված դժվարությունների, հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակությունը «Սովետական գրող» հրատարակչության միջոցով իրագործելու նպատակահարմարության և այլ հարցերի մասին։

Ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Տ. Ղանալանյանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ է. Բ. Աղայանն ու Ռ. Վ. Զարյանը։

Ա. Տ. Ղանալանյանը զեկուցեց «Վ. Սարոյանի ստեղծագործության ազգային ժողովրդական արմատները» թեմայով։ է. Բ. Աղայանը զեկուցեց Հայոց թվականի պատմության մի քանի հարցերի, իսկ Ռ. Վ. Զարյանը՝ Շեքսպիրի հայերեն թարգմանությունների մասին։

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ